ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/148» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Երևանի արհեստի պետական քոլեջի դպրոցական կահույքի լրակազմի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.09.2025 թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Անահիտ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ
2	«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ
3	«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Զբաղեցրած տեղ	Մասնակիցների անվանումները	Նախահաշվային գին	Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			Մասնակցի կարգավիճակ
				Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	
1	1	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	48185340	24000000	4800000	28800000	
1	2	«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ	48185340	26000000	5200000	31200000	
1	3	«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	48185340	440000000000	88000000000	528000000000*	Մերժված

*Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 23.09.2025թ. ժամը 11:00-ին

Բացակայում է հանձնաժողովի անդամ Անահիտ Հակոբյանը:

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 **«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել **«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել **«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ի հայտը:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

7.3 **«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ-ի** հայտը մերժվել է համակագի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին.

8.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան

---------- Արման Երանոսյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/